

3836


5526

# ԿՈՉ

ԲՈԼՈՐ ՄԱԼԱԹԻԱՑԻՆԵՐՈՒՆ



ԿԱՐԴԱՎ ԵՒ ԱՐԹՈՒՑԻՐ



062

4-72

37

## ԿՈՉ

ԲՈԼՈՐ ՄԱԼԱԹԻԱՑԻՆԵՐՈՒՆ

1. Հարեւանցի ակնարկ մը Մլթ-  
կրթ. Ընկերութեան կազմութեան :

2. Նոր Մալաթիոյ շինութիւն :

3. Շրջարերականներու քննական  
անդրադարձում մը :

4. Մ. Արսլանեան և Կեդր. Վարչ-  
չութեան կործանարար քաղաքակա-  
նութիւնը :

5. Պատգ. Ժողովները և անոնց  
ներողամիտ ընթացքը Մ. Արսլանեա-  
նի և կ. Վարչչութեան հանդէպ :

6. Պատասխանատուները և ներ-  
գաղթի անյաջողութեան և Կրթասի-  
րացի գրամին շռայլութեամբ մը-  
խումբին ,

7. Կանխամտածուած դաւա-  
դրութիւն մը Մլթ. Կրթ. Ընկերու-  
թեան գոյութեան դէմ :

2001

2010

3836

26925-Ա.2.

Սիրելի հայրենակիցներ,

Պիտի խօսինք Մալաթ-. Կըթ-. Ընկերութեան չուրջ, պիտի խօսինք մեր սրտի խորէն անոր վրայ բացուած վէրքի մասին, պիտի խօսինք բոլոր հայրենակիցներու արիւն քըրտինքով վաստկած դրամներու և բարոյական անսահման զոհողութիւններու մասին, և վերջապէս ստիպեցիք մեզ որ խօսինք այսպէս գրաւոր կերպով: Կրնաք զայն կոչել բողոքի ձայն, կրնաք կոչել զայն ահազանդ մը խոռլ ականջներու. կոչեցէք ինչ որ կուզէք, քանի որ դուք դանակը կը փորձէք միշել մեր այնքան գուրգուրացած պաշտելի ընկերութեան սրտին: Մենք պիտի խօսինք, որովհետեւ անոր ստացած և ստանալիք վէրքը մեր մարմնին վրայ կզգանք:

Վերյիշենք անոր կազմութիւնը անգամ մը եւս: Քսան և ութը երկար տարիներ առաջ Ամերիկայի Մալաթիացի հայրենակիցներ երբ կը տեսնեն որ արդէն բաւական թիւ կը կազմեն կը մտածեն իրենց ծննդավայրին, մասնաւորապէս եկող նոր սերունդին օգտակար ծառայութիւն մը մատուցանել: Կը հաւաքուին խումբ մը Մալաթիացիներ Ամերիկայի Ֆիլատելֆիա քաղաքին մէջ:



5810-54

Մի քանի ժողովներ և խորհրդակցութիւններ ընելէ ետք անոնց որոշումը կ'ըլլայ շատ պարզ ու վճռական՝ ԴԱՍ-ՏԻԱՐԱԿԵԼ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ-Ը ԲԱՐՁՐ ԿՐԹՈՒԹԵԱՄԲ :

Ընդառաջ կ'երթան, ներկայացիչներ կը զրկեն Ամերիկայի ուրիշ քաղաքներ՝ Նիւ Եօրք, Ռւստր, ևն . և անմիջակէս կը պատրաստեն ծրագիր-կանոնագիր մը և ահա կազմուած ընկերութիւնը արդէն ջերմ ընդու-լութիւն կը գտնէ բոլոր Մալաթիա-ցիներու կողմէ և տակաւ առ տակաւ կը բարձրանայ և կը գրաւէ հայրենակ-ցական միութիւններու կարգին առաջնակարգ տեղ մը :

Հիմնադիր հայրենակիցներ Ծր-րագիր-կանոնագրին մէջ իրենց կը-տակը կընեն այսակս . . Ընկերութեան ԱՆՈՒՆՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ու ԼՈՒԾՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՆ անփոփոխ են : Շատ պարզ և դիւրը բրոնելի :

Ահա այսպէս համեստ եղած է անոր կազմութիւնը բայց շատ վեհ նպատակով :

Դժբաղաբար ան երբ կազմ ու պատրաստ էր նր Ծրագրի գործա-դրութեան, մեր դարաւոր թշնամի-ին վայրագութիւնը հնչեց աւելի ուժգնորդն քան նախորդները : Այդ անգութ թշնամին ջարդ եց Թրքակա-

յաստանը մէկ ծայրէն միւսը և ստի-պեց արտասահմանի բոլոր հայ զան-գուածները իրենց բեկորները ապրե-ցնելու գործին լծուիլ :

Մալ . կրթ . Ընկերութիւնը իր կարգին (իր նպատակին առաջնոր-դութեամբ) ունեցած կազմ ու պատ-րաստ մեթենան ի սպաս զրաւ Մալա-թիացի բեկորներու ազատագրու-թեան գործին : Եւ ըրաւ իր լաւագոյ-նը . թող պատմութիւնը խօսի այդ մասին : Ատով ալ չի բաւականացաւ և ծրագրեց նոր Մալաթիա մը շինել Հայաստանի մէջ և հսն փոխագրել բոլոր Մալաթիացիները : Բանակցու-թիւններ վարուեցան և . Հայաստանի հետ և երկուստեք համաձայնու-թեամբ՝ Մ . Կ . Բ . 4 տարի էն պիտի շինէ 20 տուն և ոռոգէ բաւականա-չափ հող և և . Հայաստանն ալ ատոր փոխարէն պիտի ընդունի մեր Մալա-թիացիները : Մանրամասնութեանց համար կարգա՛ 1927 թիւ Ա. Հ ընդարե-րականը :

Ակնարկ մ'ալ նետենք շրջաբե-րականներու վրայ :

1926, թիւ 1 շրջաբերականէն ..  
Տէր Ստեփան Քհնյ. կը գրէ .  
«Վեց հարիւր Մալաթիացիներ պատ-րաստ են գաղթել իրենց ծախսերով  
եթէ կարելիութիւն ստեղծուի» :

1927 Նոյ. 22, թիւ Ա. շրջաբեր .

«Մինչև այժմ կտրուած պատրաստ են 20 տուներու բաւարար կարծր քարեր : Բան տուներու կակուղ քարերուն համար պայմանաւորուած ենք : ... Գնուած են 8 տուներու տախտակամածի փայտեր , 200 բարտի , ևն» :

Նաև կը տեսնէք կառավարութեան համաձայնութիւնը այս շրջաբերականով :

1927 Ապրիլ 8, թիւ 2. կը գրեն .

«Մալաթիայէն ստացած ենք նամակ մը , որով կըսեն թէ 800 Մալաթիացիներ կան թուրքերու քով դտնուածներէն զատ :

1927 Օգոստ. 18, թիւ 4 շրջ .

«Պիտի շինուին կեղը . մեծ հըրակ մը , քաղաքապետական չէնք , միլիցիայի տուն , դատարան , թատրոն , հիւանդանոց , բաղնիք , նաև մանր հրապարակներ» :

1928 թիւ Ա. շրջաբերականէն .

«Արսլանեան ապահոված է 80 զիգէներ և քօնսիւլը ամէն դիւրութիւն պիտի տայ» :

1928 Նոյ. 8, թիւ 2 շրջ .

«Արսլանեան կը գրէ թէ 290 զիգէներ առած է նախկին 80 հատէն զատ :

1928 , Յունիս 29 , թիւ 3 շրջ .

«Եաւս քան գաղթականներ փոխադրելը Նոր Մալաթիա , անոնց ապրուստի միջոցները ապահովենք : ... Այս գարնան քարերը մաքրած և հերկած են 7 տեսիագին հող , (այսինքն մօտաւորապէս 20 էյքր) տնկուած են 200 ծիրանի , 300 տանձենի , 200 խնձորենի և 600 անպատճեղ ծառեր» :

1929 , Հոկտ. 13 , թիւ Ա. շրջ .

«Մալաթիացիներու մէջ յանդուգն ոգի չկայ : ... Հին Մալաթիա լուր զրկուած է 80 հոգի առանց անուացանկի գաղթելու» :

1929 . Յունիս 6 , թիւ 4 շրջ .

«Այս տարի տնկուած են 3 տեսակին խաղողի այգի , 5000 երկու տարեկան և 30,000 հօթն մասուայ թթենիներ , 1000 ակացիա , 1000ի մօտ ալ խնձոր , տանձ , ծիրան , ևն» :

1929 թիւ Գ. շրջաբերականէն .

«Հին Մալաթիայէն կը տեղեկացնեն 650 Մալաթիացիներու ի վիճակի և պատրաստ գաղթելու պարագան : 67 Հալէպի հայրենակիցներ Պոլսէն պիտի ստանան վիզէները» :

1931 թիւ 1 շրջաբերականէն .

«Յայտնում ենք որ 312 զիգէները դրկուած են Տրապիզոնի քօնսիւլին : »

Արդ , հայրենակիցներ , մեր քով  
գտնուած շրջարերականները այս չափ  
են և անոնցմէ միայն առած ենք  
մէկ մէկ նախադասութիւն : Եթէ հա-  
շիւ մը ընենք կ'ունենանք հետեւեալ  
պատկերը ..

Տնկուած են 38,200 ժառեր ,  
առնուած են 742 անգործածելի զի-  
գէներ , շինուած են տուներ , որոնց  
ինրաքանչիւր սենեակը արժեր է 1000  
տոլար . ապա ՊԱՏԳ . ԺՈՂՈՎՆԵՐԸ  
ԽԱԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԹԶԱԿԱԽՈՐ ՀԵ-  
ՌԱԳԻՐՆԵՐԸ եի ԿԱՐԱՒԱՆՆԵՐԸ ,  
ապա ԿԵԴ . ՎԱՐՉՈՒԹԵԱՆ եի ԱՐՍ-  
ԼԱՆԵԱՆԻ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԹՂԹԵՐԸ ,  
ապա ՄԵՐ ՔՈՎ ԶԻ ԳՏՆՈՒԱԾ ՇՐՋԱ-  
ԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒ եի ՆԱՄԱԿՆԵՐՈՒ  
ՆԵՐՔԻՆ ԾԱԼՔԵՐԸ , ՀԱՇՈՒԱԿԱՆ  
ՄԱՍԻՆ ԽՈՐԱՉՆԵԻՆ ՔՆԵՈՒԹԻՒՆՆԸ ,  
ապա 6 ՍԵՆԵԱԿՆՈՑ ՏՈՒՆԵՐԸ ԵՐ-  
ԿՈՒ ՏՈՒՆ ՀԱՇՈՒԵԼԸ : Թող Ապրիլ  
10ին Շրջանային Պատգ . Ժողովը ըսէ  
իր ըսելիքը :

Սյապէս հարեւանցի ակնարկ մը  
նետելէ ետք շրջաբերականներու վը-  
րայ կը տեսնենք որ Նոր Մալաթիոյ  
շինութիւնը կատարուած է միայն Կ .  
Վարչութեան և Մ . Արալանհանի քը-  
մահաճոյքներուն համաձայն և ոչ հա-  
մապատասն գործ մեր վատնած 70 ,  
000 տոլարէ աւելի դրամի և բարոյա-

կան ու Փիզիքական անսահման զո-  
հողութեանց : Կեդր . Վարչութիւնը  
Ծնկերութեան տունը ծանրաբեռնեց  
յաւելեալ մօրթկէյձներով , վասն ո-  
չինչի : Այն ատեն որ Խորհրդային Մի-  
ութիւնը զանգուածային զաղթի  
արտօնութիւն տուած էր , մեր ներ-  
կայացուցիչը Մ . Արալանեան չրարե-  
հածեցաւ մէր 600 Մալաթիացիները  
հոն տանիլ , որոնք ունէին սեփական  
նիւթական միջոցներ և մեր խելօք  
ղեկավար կեդր . Վարչութիւնն ալ  
համաձայն գտնուեցաւ անոր յայտ-  
նած ներքին մտքերուն : Արդեօք Ա-  
րարկիրցիները տուն ունէին որ այդ  
նոյն տարին խումբերով գաղթեցին  
և որոնց թիւը այսօր 1300ի կը հասնի  
և տուները մօտաւորապէս 903ի : Ար-  
դեօք Սեբաստացիները մէկ չիւղ տըն-  
կած էին , երբ անոնց ներկայացուցի-  
չը 26րդ պատգ . Ժողովին յայտարա-  
րեց , որ թէկ մէկ սիւն չենք տնկած  
բայց 1000 մարդ տարած ենք :

Դժբաղդաբար , այսօր այն 650  
Մալաթիացիները չենք գիտեր թէ ո՞ր  
քարին տակն են . խօսեցէ՛ք պարոն-  
ներ , թբքական դժոխքի ո՞ր խաւար  
անձաւին մէջ կը տառապին : Արդեօք  
խղճի խայթ անգամ չէ՞ք ունենար ,  
թէ ոչ դուք մարդ էակ չէ՛ք , բոլորո-  
վին տարբեր շինուածք մը :

Հայրենակիցնե՞ր պէտք է դիրքերը ճշգենք : Մէկդի նետել բարեկամութիւնը , խնամութիւնը և մըտածել թրքական դժոխքի մէջ ամէն օր այրուող հայրենակիցներու մասին : Պէտք է ըլլալ անողոք մեր պաշտօնեաներու հանդէպ : Ժամանակ է որ տղայ մարդու կեցուածքով դիմագրաւենք կացութիւնը :

Այլեւս մեր աչքերը պէտք չէ շլացնեն երեւակայական վիզէները , անթիւ չոնկուած ծառերը անկուած սեպէնը , 200 հոգի աշխատելիք կօշիկի գործարանը , նոր Մալաթիայի որսի շունը , մուկրունող կատուն , ճագարն ու աղաւնիները , ռատիօն ու անաստուածութեան ակումբները : Ասոնք դժբաղդարար մեր թուրքիոյ հայրենակիցներու կեանքը չեն ապահովեր :

Մկրտիչ Սրբանեան և կեդր . վարչութիւն . ահա պատասխանատուները մեր գործի անյաջողութեան որոնք իրենց կործանարար քաղաքականութեամբ այս աստիճանին հասցուցին մեր ընկերութիւնը և դառն յուսալքումի մատնեցին արտասահմանի հայրենակիցները : Իսկ հին Մալաթիայի հայրենակիցներուն մասին թող իրենք խօսին : Ասոնք են պատասխանատուները մեր ծանր աշխատանքով վաստկած դրամին շուայլօրէն վատնուելուն : Ասոնք են պատասխա-

նատուները ներգաղթի անյաջողութեան : Ընթերցող հայրենակից , այս փաստերը քեզ անգամ մըն ալ վերյիշեցնելէ ետք քեզ կը թողունք որ ինքզինքդ դնես հին Մալաթիոյ դքժոխային պայմաններուն տակ ապրող քու մէկ սիրելիիդ տեղ և ըստ այնմ ըսես քու բսելիքդ Ապրիլ 10ին գումարուելիք Շըջ . Պատգ . ժողովին : Այս ժողովը պետք չէ որ վերաբերուի ներողամտութեամբ , ինչ պէս իր նախորդները : Այս ժողովը պէտք է վերջնական վճիռ արձակէ յանցաւորներուն :

ԿԱՆԽԱՄՏԱԾՈՒՅԾ ԴԱԼԱՐԱԽԹԻՒՆ

Ծանօթ 28րդ Պատգ . ժողովը յանձնախումբ մը կ'ընտրէ Մ . Կ . Ընկերութեան ներքին կանոնագրին բարեփոխումներ մացնելու համար , բարեփոխումներ որոնք Ընկերութիւնը աւելի լաւ կ'առաջնորդեն , այնպիսի յաւելումներ որոնք պէտք են : Այսպէս դրուած է հարցը նախորդ Պատգ . ժողովներուն և այսպէս ալ փոխանցուած էր մէկէն միւսին : Դժբաղդարար այս տարի Փետր . 10ին 1932 , թիւ շրջաբերական մը հրապարակ կը հանէ կեդր . Վարչութիւնը , որով կ'ըսէ թէ կանոնագիր բարեփոխող Յանձնախումբը յանձնած է

Ե իրեն գրութիւն մը վերոյիշեալ  
գործին վերաբերեալ և կ. Վարչու-  
թիւնն ալ քննելէ ետք կը համաձայ-  
նի և լրսկ' ընծայէ , որով կոչ կընէ  
հայրենակիցներուն , որ Ապրիլ 10ին  
երթան նիւ եօրք , ուրածել պիտի գու-  
մարուի Շրջանային Պատգ . Փողով և  
հոն փոխեն Մալ . Կրթ . Ընկերութեան  
Ծրագրի անփոփոխ յօդուածները :  
Այն յօդուածները , որոնք մեր ընկե-  
րութիւնը հասցուցեր են այս բար-  
ձրութեան , այն յօդուածները որոնք  
օգներ են նոր Մալաթիոյ շինութեան  
տրամադրելնակ իր նպատակին յա-  
տուկ անձեռնմխելի գանձէն աւելի  
քան 70,000 տոլարն ալ , առանց համ-  
արժէք փոխարինութեան , այն յօդ-  
ուածները որոնք Ընկերութեան ող-  
նայարը կը կազմեն :

Ուրիշ խօսքով կ. Վարչութիւ-  
նը և Յանձնախումբը դանակը կը  
դնեն Մ . կ. Հ. ի սրտին , որ գիւրին  
կերպով տունն ալ ծախսն և միան-  
գամ ընդմիշտ վերջացնեն Ընկերու-  
թիւնը :

Ահա հայրենակիցներ , պատ-  
րաստուած դաւագրութիւն մը Ընկե-  
րութեան գոյութեան սպառնացող :  
Ե՞ն աւելի բան ակնկալել այսպիսի կ.  
Վարչութենէ , պիտի ըլլար սովորա-  
կան միամտութիւն մը : Նոյն շրջա-

բերականին մէջ կը կարդանք նաեւ  
կեդ . Վարչութեան կոչը ուղղուած  
Մալաթիացի հայրենակիցներու , որը  
հրատարակուեցաւ նաեւ թերթերու  
մէջ . գժբախտարար կեդ . Վարչու-  
թիւնը ինքզինքը անզօր կը նկատէ և  
կը թելադրէ զանգուածային գաղթի  
կարաւաններուն միանալ և նոր Մա-  
լաթիա երթաւ :

Իեղճ կ. Վարչութիւն գուն ինք-  
զինքդ կը խարե՞ս թէ նոր խաղ մըն  
է որ կը խաղաս մեր ցիր ու ցան հայրե-  
նակիցներու գլխին :

Զանգուածային գաղթը մասնա-  
ւորներու համար է և ոչ թէ մեզ պէս  
տուն աեղ շինող հայրենակցականնե-  
րու :

Թո՛ղ ամէն մէկ Մալաթիացի մը-  
տածէ այս հարցերուն շուրջ և ըսէ իր  
ըսելիքը խղճմտօրէն , մենք ալ կը հա-  
մաձայնինք . բայց պատգամաւորներ  
մասնաւորապէս պէտք է անվերապահ  
ըլլան . անցեալի ներողամտութիւնը  
վնասեր է մեզ և ձեռք բարձրացնե-  
լու տպեղ սովորութիւնը տեղի տուեր  
է ծայրահեղ անտեղիութիւններու :  
Անոնք պէտք է ունենան քիչ մը հե-  
ռատեսութիւն և անաջառ դատողու-  
թիւն և ոչ թէ զեկավարներու համա-  
կերպող : Սովորութեան , բարեկա-  
մութեան և ինամիութեան խնկար-

կուներ եղած են շատ շատեր ու այդ  
վախկոտ ընթացքով վնասած են մեր  
ընկերութեան : Պատգամաւորներու  
այս թերութիւնները յիշելով մասնա-  
ճիւղերու ուշադրութիւնը կը հրաւի-  
րենք այս պարագաներուն վրայ :

Ուրեմն հայրենակիցնե՛ր , այս  
բացարութիւնները անցողակի կեր-  
պով տալէ ետք պիտի փափաքինք որ  
ամէն Մալաթիացի հայրենակից մէկ  
մարդու աէս ծառանայ այս աղաղա-  
կող անիրաւութիւններուն դէմ եւ  
միանգամ ընդ միշտ ազատէ Մալաթ-  
իրթ . ընկերութիւնը գիշատիչ ձի-  
րաններէ :

Նոր և վճռական ուղղութիւն մը  
տալ նՈՅ ՄԱԼԱԹԻՌՈՅ շինութեան ,  
մեր զոհաբերած դրամները եւ ան-  
սահման բարոյական աշխատանքները  
աւելի արդիւնաբեր ընելու համար :  
Պէտք է դործնական միջոցներու գի-  
մենք մեր հայրենակիցները հոն տա-  
նելու համար . անոնց համար շինե-  
ցինք նոր Մալաթիան . այս է ցաւը :

Հայրենակիցներ , անգամ մը եւս  
ձեր սրտերը թունթ հանեցէք . ան-  
գամ մը ես ձեր մտքերը լարեցէք  
շիտակ և դործնական ուղղութեամբ


գուցէ այս վերջինը և ամենայաջողը  
ըլլայ մեր հայրենակիցներուն ազա-  
տագրութեան գործը աւելի յաջողա-  
պէս յառաջ տանելու համար :

Հայրենակացական բարեւներով  
և Յարդանքներով

ՄԱՆՈՒԿԵԼ ՍՏԵՓԱՆՆԵԱՆ  
ՍԱՐԳԻՍ ՇԱՀՐԻԿԵԱՆ  
ԳԷՈՐԳ ԱՐՓԱՋԵԱՆ  
ԳՐԻԳՈՐ ԿԻԿԻՐԵՂԵԱՆ  
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԹԻԹԻԱՆԵԱՆ

Մարտ 16 , 1932

ՖիլատելՓիա



Յ . Գ . Ստացած ենք Յ . Մ .  
Աճէմեանի կոչը , Մալաթիացիներուն  
ուղղութած , ուր կը գտնէք կերպոն .  
Վարչութիւնը մերկացնող փաստեր ,  
աղաղակող սխալներու վերաբերեալ ,  
մասնաւորապէս հաշուական խնդրոյ  
շուրջ :



0022862

2013

5526



NL0022862

101